

191¹ Իսկ ի² վաղիւն ածեալ առաջի Սիւնեաց իշխանին քուրմս մի, աղաչէին՝ զծածկեալ տեղիս³ գանձուցն ցուցանել եւ զդրուսս գետնափոր տանն: 192⁴ Եւ ոչ ասաց, այլ մեռաւ ի նոյն կախաղանին, եւ ոչ եղեւ⁵ հնար գտանել: 193⁶ Թեպէտ եւ կարծէին ընդ հիմամբքն եկեղեցւոյն լինել⁷, ուր Դեմետրեայ տաճարն էր, քանզի հիմն եկեղեցւոյն եղաւ⁸ ի նոյն տեղիս, նոյն չափովն լայնութիւնն եւ երկայնութիւնն, բայց միայն՝ զի նոքա յարեւմուտս⁹ երկրպագէին: 194¹⁰ Նոյնպէս քննէին եւ զտաճարն Գիսանէին¹¹ ի վեր բերել, որ էր առ Յորդ աղբերն, յարեւելից կուսէ, որպէս երկուս քալս մարդոյ հեռի գոլով. եւ ոչ գտին:

195¹² Եւ¹³ իբրեւ լցան¹⁴ նոցա անդ ինն ար¹⁵, երթեալ իշխանն Սիւնեաց յաւանն Կուառս, հաւանեցոյց զգաւրս գեղջն գալ ի մկրտութիւն, որք յանձն առին եւ եկին¹⁶ ընդ նմա: 196¹⁷ Եւ առեալ սրբոյն Գրիգորի՝ իջուցանէ զնոսա ի ձորն¹⁸ Այծսանայ¹⁹ եւ մկրտեաց զնոսա, ¹⁵որ էր յարեւելից կուսէ հանդէպ Կաճկանից՝¹⁶ Աստղանից¹⁷ բերդին: 197¹⁸ Եւ մկրտեաց զնոսա քրիստոսագարդ աւծմամբն՝ առնելով հաւատացեալս Սուրբ Երրորդութեանն: 198¹⁹ Եւ երեւցոյց Տէր լոյս մեծ ի սեան հրեղէնի ի վերայ մկրտելոցն. եւ կացեալ երիս ժամս լոյսն²⁰ ի վերայ սխրալի քահանայագործութեանն եւ անդէն ծածկեցաւ ի տեսողացն: 199²¹ Եւ որք մկրտեցան²², էին ԵՌ²³:

200²⁴ Եւ առեալ ածե²⁵ զնոսա ի տերունեան²⁶ տաճարն²⁷: 201²⁸ Եւ տաւն սրբոյ Կարապետին տայր կատարել ի նոյն արն, որ հանդիպեցաւ ի Նաւասարդի մինն²⁹: 202³⁰ Եւ տուեալ զնոսա ի ձեռս քահանայիցն³¹ ետ տանել³² ի գիւղս իւրեանց³³: 203³⁴ Եւ հրամա-

1 *hmo չիք* Իսկ ի վաղիւն ... ոչ գտին (*Նախ. 194*)

2 *l չիք* ի

3 *l տեղիսն*

4 *l չեղեւ չիս* ոչ եղեւ

5 *s լինիլ*

6 *l դրաւ չիս* եղաւ

7 *l յարեւմուտ*

8 *l Գիսանէ*

9 *sv չիք* եւ

10 *hmo լցաւ չիս լցան (lsv)*

11 *sv անդ աւուրք Թ չիս անդ ինն ար (lhmo)*

12 *hmo գալ չիս* եւ եկին (*lsv*)

13 *m չիք* ի ձորն / *l* իջոյց *չիս* իջուցանէ ... ձորն

14 *lv* Եմանու, *s* Եմանու Այծսանայ *չիս* Այծսանայ (*hmov*) / *v*¹ Եմանու (*լուսանցքում*)

15 *hmo չիք* որ էր ... ի տեսողացն (*Նախ. 198*)

16 *l Կաճկանից*

17 *l Աստղանից*

18 *l լուսոյն*

19 *sv մկրտեցանն չիս մկրտեցան (lhmo)*

20 *sv արք* եւ մանկտի ոգիք ԵՌ եւ Ծ *չիս* ԵՌ (*lhmo*)

21 *m* ած, *lo* ածեր *չիս* ածէ (*hsv*)

22 *hmov* տերունական *չիս* տերունեան (*ls*)

23 *hmo* տաճարին տեղիսն *չիս* տաճարն (*lsv*)

24 *hmov* որ ար մի էր Նաւասարդի *չիս* ի նոյն արն ... մինն (*l տող*) (*ls*)

25 *hmo* քահանայից

26 *l* եւ յղարկեալ *չիս* ետ տանել (*sv*) / *hmo* տանել զնոսա

1 *m* գեղն, *ho* գիւղն *չիս* գիւղս իւրեանց (*lsv*)